ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Որպես Կոստանդնուպոլսո Պատրիարք, մենք ևս մեր կարգին կուզանք բաժնելու, կիսելու ուրախությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո բովանդակ զավակներուն: Անգամ մը ևս սգո շղարշը կվերցվի Ս. Լուսավորչի Աթոռին վրայեն, և մենք կունենանք նորընտիր գահակալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ:

Բոլոր նվիրապետական Աթոռները ծառայության Աթոռներ են, և հատկապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ գահակալել՝ կնշանակե սպասավորը դառնալ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո բոլոր սպասավորներուն: Եվ երբ երրորդ հազարամյակը կբացվի մեր ժողովրդի հանդեպ, այնքան կենսական է յուրաքանչյուրիս համար, հատկապես Եկեղեցվո նվիրապետական Աթոռներուն վրա բազմածներուն համար, որպեսզի առաքելոց և մարգարեից հիման վրա հաստատված մեր Սուրբ Եկեղեցին նոր ոգով և նոր եռանդով նայե դեպի ապագա և հոգևոր սնունդ բաշխե, ջամբե մեր սիրեցյալ ժողովրդին:

Այս զգացումներով մենք կմաղթենք իմաստություն, եռանդ և կորով նորընտիր Հայրապետին և քաջառողջություն, որպեսզի ինքը կարողանա կատարել, կյանքի կոչել այն ուխտը, որ քիչ առաջ կատարեց առաջի Ամենակալ և առաջի Ս. Սեղանույն: